

**Կոնվենցիա
Վճարովի արձակուրդների մասին
(վերանայված)**

Աշխատանքի միջազգային կազմակերպության Գլխավոր խորհրդածոդովը,

հրավիրվելով ժննում՝ Աշխատանքի միջազգային բյուրոյի վարչական խորհրդի կողմից, և հավաքվելով 1970 թվականի հունիսի 3-ին՝ իր 54-րդ նստաշրջանին,

որոշելով ընդունել որոշ առաջարկություններ վճարովի արձակուրդների մասին, որը նստաշրջանի օրակարգի 4-րդ կետն է, և

որոշելով, որ այդ առաջարկությունները պետք է ունենան միջազգային կոնվենցիայի ձև,

հազար ինը հարյուր յոթանասուն թվականի հունիսի քսանչորսին ընդունում է սույն Կոնվենցիան, որը կարող է անվանվել Վճարովի արձակուրդների մասին 1970 թվականի Կոնվենցիա (վերանայված):

Հոդված 1

Սույն Կոնվենցիայի դրույթները, այնքանով, որքանով դրանք այլ կերպ չեն իրագործվել հավաքական համաձայնագրերին, արբիտրաժի որոշումներին, դատական որոշումներին, աշխատավարձի սահմանման հաստատված ընթացակարգերին կամ ազգային պրակտիկային համապատասխան ցանկացած այլ միջոցով, իրագործվում են ազգային օրենքներով և կանոնակարգերով:

Հոդված 2

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է բոլոր աշխատող անձանց նկատմամբ՝ բացառությամբ նավաստիների:

2. Անհրաժեշտության դեպքում, իրավասու մարմնի կողմից կամ համապատասխան ընթացակարգերի միջոցով, գործատուների և աշխատողների շահագրգիռ կազմակերպությունների առկայության դեպքում դրանց հետ խորհրդակցելուց հետո, կարող են ձեռնարկվել միջոցներ սույն Կոնվենցիայի կիրառման ոլորտից աշխատող անձանց սահմանափակ կատեգորիաներ բացառելու նպատակով, որոնց աշխատանքի առումով ծագում են Կոնվենցիայի կատարմանը կամ օրենսդրական կամ սահմանադրական հարցերին վերաբերող հատուկ, լուրջ հիմնախնդիրներ:

3. Սույն Կոնվենցիան վավերացրած Կազմակերպության յուրաքանչյուր Անդամ Աշխատանքի միջազգային կազմակերպության կանոնադրության 22-րդ հոդվածի համաձայն ներկայացվող՝ Կոնվենցիայի կիրառման մասին

առաջին զեկույցում թվարկում է այն կատեգորիաները, որոնք բացառվել են սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նշելով դրանց բացառման պատճառները, և հետագա զեկույցներում հայտնում է բացառված կատեգորիաների առնչությամբ իր օրենսդրության և պրակտիկայի սկզբունքների մասին և այն չափի մասին, որով Կոնվենցիան կիրառվել է կամ ենթադրվում է, որ պետք է կիրառվի այդպիսի կատեգորիաների նկատմամբ:

Հոդված 3

1. Յուրաքանչյուր անձ, ում նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան, ունի ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք՝ սահմանված նվազագույն տևողությամբ:

2. Կոնվենցիան վավերացրած Կազմակերպության յուրաքանչյուր Անդամ վավերագրին կից հայտարարությունում սահմանում է արձակուրդի տևողությունը:

3. Արձակուրդն աշխատանքային մեկ տարում ոչ մի դեպքում չպետք է պակաս լինի աշխատանքային երեք շաբաթից:

4. Կոնվենցիան վավերացրած յուրաքանչյուր Անդամ հետագայում կարող է նոր հայտարարության միջոցով ծանուցել Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին այն մասին, որ սահմանում է արձակուրդի ավելի երկար տևողություն, քան այն տևողությունն է, որը սահմանված է վավերացման ժամանակ:

Հոդված 4

1. Այն անձը, որի աշխատանքի տևողությունը տարվա ընթացքում պակաս է նախորդ հոդվածով նախատեսված իրավունքն ամբողջապես օգտագործելու համար, այդ տարվա ընթացքում ունի վճարովի արձակուրդի իրավունք, որը համամասնական է իր աշխատանքի տևողությանը:

2. Սույն հոդվածի 1-ին կետում **տարի** տերմինը նշանակում է՝ օրացուցային տարի կամ իրավասու մարմնի կողմից կամ համապատասխան ընթացակարգով սահմանած նույնպիսի տևողությամբ ցանկացած այլ ժամանակաշրջան:

Հոդված 5

1. Ամենամյա վճարովի արձակուրդի իրավունքի համար կարող է պահանջվել աշխատանքի նվազագույն ժամանակաշրջան:

2. Որակավորման այդպիսի ժամանակաշրջանի տևողությունը պետք է սահմանվի շահագրգիռ երկրի իրավասու մարմնի կողմից կամ համապատասխան ընթացակարգերով, բայց չպետք է գերազանցի վեց ամիսը:

3. Արձակուրդ տրամադրելու նպատակով աշխատանքի տևողության հաշվարկի մեթոդը յուրաքանչյուր երկրում սահմանվում է իրավասու մարմնի կողմից կամ համապատասխան ընթացակարգերով:

4. Յուրաքանչյուր երկրում իրավասու մարմնի կողմից կամ համապատասխան ընթացակարգերով սահմանվելիք պայմաններով՝ շահագրգիռ աշխատող անձից անկախ պատճառներով աշխատանքից բացակայելը, ինչպիսիք են հիվանդությունը, խեղումը կամ հղիությունը, հաշվարկվում է որպես աշխատանքային ժամանակահատվածի մաս:

Հոդված 6

1. Պաշտոնական և ավանդական ոչ աշխատանքային օրերը, անկախ այն բանից՝ ընդգրկվում են դրանք ամենամյա արձակուրդի ժամանակաշրջանում, թե ոչ, չեն հաշվարկվում որպես սույն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ամենամյա նվազագույն վճարովի արձակուրդի մաս:

2. Յուրաքանչյուր երկրում իրավասու մարմնի կողմից կամ համապատասխան ընթացակարգերով սահմանվելիք պայմաններով՝ հիվանդության կամ խեղման պատճառով առաջացած անաշխատունակության ժամանակաշրջանները կարող են չհաշվարկվել որպես սույն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ամենամյա նվազագույն վճարովի արձակուրդի մաս:

Հոդված 7

1. Սույն Կոնվենցիայով նախատեսված արձակուրդից օգտվող յուրաքանչյուր անձ այդ արձակուրդի տևողության լրիվ ժամանակաշրջանի համար ստանում է առնվազն իր հիմնական կամ միջին վարձատրությունը (ներառելով այդ վարձատրության ցանկացած մասի դրամական համարժեքը, որը վճարվում է նույն ձևով, և որը, անկախ այն բանից՝ տվյալ անձը արձակուրդում է, թե ոչ, մշտական շարունակական վճար չէ), որը հաշվարկվում է յուրաքանչյուր երկրում իրավասու մարմնի կողմից կամ համապատասխան ընթացակարգերի միջոցով սահմանված մեթոդին համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն վճարման ենթակա գումարները վճարվում են շահագրգիռ անձին մինչև արձակուրդը, եթե այլ կերպ նախատեսված չէ այդ աշխատողի և գործատուի համաձայնագրում:

Հոդված 8

1. Ամենամյա վճարովի արձակուրդի բաժանումը մասերի կարող է թույլատրվել յուրաքանչյուր երկրի իրավասու մարմնի կողմից կամ համապատասխան ընթացակարգերի միջոցով:

2. Եթե գործատուին և աշխատողին վերաբերող համաձայնագրում այլ կերպ նախատեսված չէ, և այն պայմանով, որ այդ աշխատողի աշխատանքի տևողությունը տալիս է նրան այդ իրավունքը, արձակուրդի այդպիսի մասերից մեկը պետք է բաղկացած լինի առնվազն երկու անընդհատ աշխատանքային շաբաթից:

Հոդված 9

1. Սույն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետում հիշատակված ամենամյա վճարովի արձակուրդի անընդհատ մասը տրվում և օգտագործվում է ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում, և ամենամյա վճարվող արձակուրդի մնացած մասը տրվում է ոչ ուշ, քան 18 ամսվա ընթացքում՝ սկսած արձակուրդ տալու տարվա վերջից:

2. Ամենամյա արձակուրդի ցանկացած մասը, որը գերազանցում է սահմանված նվազագույն տևողությունը, կարող է հետաձգվել շահագրգիռ աշխատող անձի համաձայնությամբ, սույն հոդվածի 1-ին կետում նշված ժամանակահատվածով՝ մինչև լրացուցիչ նշված վերջնաժամկետը:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում հիշատակված նվազագույն տևողությունը և վերջնաժամկետը սահմանվում են իրավասու մարմնի կողմից՝ շահագրգիռ գործատուների և աշխատողների կազմակերպությունների հետ խորհրդակցությունից հետո, հավաքական բանակցությունների միջոցով կամ ազգային պրակտիկայի այնպիսի այլ մեթոդով, որը կարող է համապատասխանել ազգային պայմաններին:

Հոդված 10

1. Եթե արձակուրդի տրամադրման ժամանակաշրջանը սահմանված չէ կանոնակարգերով, հավաքական համաձայնագրով, արբիտրաժի որոշումներով կամ ազգային պրակտիկային համապատասխանող այլ միջոցներով, որոշվում է գործատուի կողմից՝ շահագրգիռ աշխատող անձի կամ նրա ներկայացուցիչների հետ խորհրդակցությունից հետո:

2. Արձակուրդի տրամադրման ժամանակաշրջանի որոշման ժամանակ հաշվի են առնվում աշխատանքի պահանջները և աշխատող անձանց համար մատչելի հանգստի հնարավորությունները:

Հոդված 11

Այն աշխատող անձը, որը լրացրել է սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետով պահանջվող աշխատանքի նվազագույն ժամանակահատվածը, աշխատանքի դադարեցման դեպքում ստանում է վճարովի արձակուրդ իր աշխատանքի ժամանակահատվածի տևողությանը համապատասխանող մասով, որի համար նա չի ստացել այդպիսի արձակուրդ, կամ՝ դրա փոխարեն տրվող փոխհատուցում, կամ՝ արձակուրդին համարժեք գումար:

Հոդված 12

Սույն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ամենամյա նվազագույն վճարովի արձակուրդի իրավունքից հրաժարվելու կամ նման արձակուրդները չօգտագործելու վերաբերյալ համաձայնությունները՝ փոխհատուցման դիմաց, ազգային պայմաններին համապատասխան ձևերով, համարվում են անվավեր կամ արգելվում են:

Հոդված 13

Յուրաքանչյուր երկրի իրավասու մարմնի կողմից կամ համապատասխան ընթացակարգերի միջոցով կարող են սահմանվել հատուկ կանոններ այնպիսի դեպքերի վերաբերյալ, երբ աշխատող անձն արձակուրդի ընթացքում զբաղվում է արձակուրդի նպատակին հակասող՝ եկամուտ ստանալուն ուղղված գործունեությամբ:

Հոդված 14

Վճարովի արձակուրդներին վերաբերող կանոնակարգերի և դրույթների պատշաճ կիրառումը և իրագործումն ապահովելու նպատակով ձեռնարկվում են Կոնվենցիայի դրույթների իրագործման մեթոդներին համապատասխանող արդյունավետ միջոցառումներ, ինչպիսիք են համապատասխան տեսչությունը կամ այլ միջոցները:

Հոդված 15

1. Կազմակերպության յուրաքանչյուր Անդամ կարող է առանձին ստանձնել սույն Կոնվենցիայի պարտավորություններ.

ա) տնտեսության ոլորտներում աշխատող անձանց վերաբերյալ՝ բացառությամբ գյուղատնտեսության,

բ) գյուղատնտեսության ոլորտում աշխատող անձանց վերաբերյալ:

2. Կազմակերպության յուրաքանչյուր Անդամ իր վավերագրում նշում է, թե արդյոք ինքը ստանձնում է Կոնվենցիայի պարտավորությունները սույն հոդվածի 1-ին կետի և ենթակետում հիշատակված անձանց, 1-ին կետի և ենթակետում հիշատակված անձանց կամ երկու խմբերի վերաբերյալ:

3. Կազմակերպության յուրաքանչյուր Անդամ, որը վավերագրով ստանձնել է սույն Կոնվենցիայի պարտավորությունները միայն սույն հոդվածի 1-ին կետի ռա էնթակետում հիշատակված անձանց կամ սույն հոդվածի 1-ին կետի րբ էնթակետում թվարկված անձանց վերաբերյալ, հետագայում կարող է ծանուցել Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին այն մասին, որ ստանձնում է Կոնվենցիայի պարտավորությունները բոլոր այն անձանց վերաբերյալ, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան:

Հոդված 16

Սույն Կոնվենցիան վերանայում է ռաՎճարովի արձակուրդների մասին ռ 1936 թվականի կոնվենցիան և ռաՎճարովի արձակուրդների մասին ռ 1952 թվականի կոնվենցիան (գյուղատնտեսության ոլորտում)՝ հետևյալ պայմաններով.

ա) ռաՎճարովի արձակուրդների մասին ռ 1936 թվականի կոնվենցիայի մասնակից Անդամի կողմից սույն Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների ընդունումը տնտեսության ոլորտներում աշխատող անձանց նկատմամբ, բացառությամբ գյուղատնտեսության ոլորտի աշխատողների, ipso jure հանգեցնում է 1936 թվականի կոնվենցիայի անհապաղ չեղյալ հայտարարմանը,

բ) ռաՎճարովի արձակուրդների մասին ռ 1952 թվականի կոնվենցիայի (գյուղատնտեսության ոլորտում) մասնակից Անդամի կողմից սույն Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների ընդունումը գյուղատնտեսության ոլորտում աշխատող անձանց նկատմամբ ipso jure հանգեցնում է 1952 թվականի կոնվենցիայի անհապաղ չեղյալ հայտարարմանը,

գ) սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը չի փակում ռաՎճարովի արձակուրդների մասին ռ 1952 թվականի կոնվենցիան (գյուղատնտեսության ոլորտում) հետագա վավերացման համար:

Հոդված 17

Սույն Կոնվենցիայի վավերագրերը գրանցման նպատակով ուղարկվում են Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին:

Հոդված 18

1. Սույն Կոնվենցիան պարտադիր է Աշխատանքի միջազգային կազմակերպության միայն այն Անդամների համար, որոնց վավերագրերը գրանցված են Գլխավոր տնօրենի կողմից:

2. Այն ուժի մեջ է մտնում երկու Անդամների վավերագրերը Գլխավոր տնօրենի գրանցելու օրվանից տասներկու ամիս հետո::

3. Հետագայում սույն Կոնվենցիան յուրաքանչյուր Անդամի նկատմամբ ուժի մեջ է մտնում նրա վավերագրի գրանցումից տասներկու ամիս հետո:

Հոդված 19

1. Սույն Կոնվենցիան վավերացրած ցանկացած Անդամ կարող է այն չեղյալ համարել Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից տասնամյա ժամկետը լրանալուց հետո՝ Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին գրանցման նպատակով չեղյալ հայտարարման մասին փաստաթուղթ ներկայացնելու միջոցով: Նման չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում չեղյալ հայտարարելու վերաբերյալ ակտի գրանցումից մեկ տարի հետո:

2. Կազմակերպության յուրաքանչյուր Անդամ, որը վավերացրել է սույն Կոնվենցիան, և որը նախորդ կետում նշված տասնամյա ժամանակահատվածին հաջորդող մեկ տարվա ընթացքում չի իրականացնում սույն հոդվածում նախատեսված չեղյալ հայտարարելու իր իրավունքը, պարտավորված կլինի հաջորդ տասնամյա ժամկետում և հետագայում ևս կկարողանա չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան սույն հոդվածով սահմանված կարգով՝ յուրաքանչյուր տասնամյա ժամկետը լրանալուց հետո:

Հոդված 20

1. Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենն Աշխատանքի միջազգային կազմակերպության բոլոր Անդամներին ծանուցում է Կազմակերպության Անդամներից ստացած բոլոր վավերագրերի և չեղյալ հայտարարելու վերաբերյալ փաստաթղթերի գրանցման մասին:

2. Կազմակերպության Անդամներին ծանուցելով իր ստացած 2-րդ վավերագրի գրանցման մասին՝ Գլխավոր տնօրենը Կազմակերպության Անդամների ուշադրությունը հրավիրում է սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվա վրա:

Հոդված 21

Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենը, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 102-րդ հոդվածին համապատասխան, գրանցման համար Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղարկում է ամբողջական տեղեկություններ բոլոր

վավերագրերի և չեղյալ հայտարարելու վերաբերյալ ակտերի մասին, որոնք իր կողմից գրանցվել են նախորդ հոդվածների դրույթներին համապատասխան:

Հոդված 22

Ամեն անգամ, երբ Աշխատանքի միջազգային բյուրոյի վարչական խորհուրդը անհրաժեշտ է համարում, Գլխավոր խորհրդաժողովին զեկույց է ներկայացնում սույն Կոնվենցիայի կիրառման վերաբերյալ և քննարկում է խորհրդաժողովի օրակարգում դրա լրիվ կամ մասնակի վերանայման հարցի ընդգրկման նպատակահարմարությունը:

Հոդված 23

1. Այն դեպքում, երբ խորհրդաժողովն ընդունում է նոր կոնվենցիա, որն ամբողջովին կամ մասնակիորեն վերանայում է սույն Կոնվենցիան, և եթե նոր կոնվենցիայում չի նախատեսվում հակառակը, ապա.

ա) Անդամի կողմից նոր, վերանայված կոնվենցիայի վավերացումը, անկախ 19-րդ հոդվածի դրույթներից, հանգեցնում է ipso jure սույն Կոնվենցիայի անհապաղ չեղյալ հայտարարման՝ պայմանով, որ նոր, վերանայված կոնվենցիան ուժի մեջ մտած լինի,

բ) նոր, վերանայված կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից սկսած՝ սույն Կոնվենցիան դադարում է Անդամների վավերացման համար բաց լինելուց:

2. Սույն Կոնվենցիան բոլոր դեպքերում ըստ ձևի և բովանդակության մնում է ուժի մեջ այն Անդամների համար, որոնք այն վավերացրել են, բայց չեն վավերացրել վերանայված կոնվենցիան:

Հոդված 24

Սույն Կոնվենցիայի անգլերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են: